

Արամազդ Մկրտչյան

ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՒ ԴԱՍՏԻԱՐԱՎԿՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՎՈՐՈՒՄԸ ՀՆՉԱԿՅԱՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՈՒՄ (XIX դ. վերջ – XX դ. սկիզբ)

Բանալի բառեր – հնչակյաններ, ազգ, հիմնախնդիր, կրթություն, դպրոց, դաստիարակություն, քաղաքական, հայաքցներ, Արևմտյան Հայաստան, Օսմանյան կայսրություն:

XIX դարի վերջին և XX դարի սկզբին հայ ազգի հասարակական-քաղաքական կյանքի առանցքային թեմաներից մեկը հոգևորի արժևորումն էր, որի վերաբերյալ քննարկումները կարևոր խթան էին ազգային ինքնագիտակցության զարգացման համար: Ազգի հիմնախնդրի (անկախության նվաճում և պետականության վերականգնում) լուծման գործում հայ մտածողների կողմից մեծապես կարևորվում էին հատկապես գիտության, կրթության և դաստիարակության հիմնահարցերը: Դրանց արժևորումն ուներ իր խորքային պատճառները, որոնք պայմանավորված էին խնդրո առարկա ժամանակաշրջանում հայ հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցող լրջագույն փոփոխություններով: Բանն այն է, որ այդ ժամանակ մեծ թափ են ստանում ազգային-ազատագրական շարժումները, որոնց ընթացքում հայ հասարակական-քաղաքական շրջանակներում ակտիվանում են ազգային դպրոցին, կրթությանն ու դաստիարակությանը վերաբերող քննարկումները: Կրթությունն ու դաստիարակությունը դիտվում են որպես ազգին ծանր վիճակից դուրս բերելու, անցյալի հարուստ մշակութային և քաղաքակրթական ժառանգությունը պահպանելու ու զարգացնելու միջոց: Այդ քննարկումները հիմք են դառնում թե՛ Արևմտյան և թե՛ Արևելյան Հայաստանում դպրոցաշինական գործի զարգացման և նոր դպրոցների բացման համար: Կրթությունը և լուսավորությունը խթանելու համար XIX դ. 70-ական թվականներից Արևմտյան Հայաստանում բացվում են մի շարք մշակութային-բարեգործական կազմակերպություններ: Դրանցից առաջիններից էր Կ. Պոլսի Օրթագյուղ թաղամասում 1876 թ. ապրիլի 15-ին հիմնադրված «Արարատյան ընկերությունը», որի նպատակն էր անվճար կրթել Կ. Պոլսի պանդուխտ հայերին¹: Այդ կազմակերպության նախածեռնողներից էր հնչակյան նշանավոր գործիչ Ա. Արփիարյանը: Կարճ ժամանակ անց ընկերությունը որոշում է դպրոցներ բացել Արևմտյան Հայաստանի այլ վայրերում ևս: Արդեն 1876 թ.

¹ Տե՛ս Կոստանյան Է., Ակնարկներ արևմտահայ մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի պատմության (19-րդ դարի 80-ական թվականներ), Երևան, 2005, էջ 7:

նույնքերին «Արարատյանի» ջանքերով (նրա գործունեության հիմնական վայր ընտրվեց Վանը) Այլուր գյուղում բացվում է առաջին վարժարանը, իսկ հետագայում դպրոցներ են հիմնվում Դատվանում, Քղիի, Բալուի ու Չարսանջակի գավառներում: Դրանցից էին «Դպրոցասիրաց-Արևելյանի» ջանքերով Մուշում, Բաղեշում և Ալաշկերտում բացված վարժարանները¹:

Արևելյան Հայաստանում կար դպրոցի երեք տեսակ՝ ծխական, հոգևոր ու թեմական: Էջմիածնի սինոդի տվյալների համաձայն՝ 1885 թ. հունվարի 1-ի դրությամբ Այսրկովկասում հայկական դպրոցների պատկերը հետևյալն էր. Երևանի թեմում կար 103 դպրոց, որից 15-ը՝ իգական, Վրաստանի և Իմերեթիայի թեմ՝ 80 դպրոց, որից 18-ը՝ իգական, Ղարաբաղի թեմ՝ 24 դպրոց, 3-ը՝ իգական, Շամախու թեմ՝ 11 դպրոց, 2-ը՝ իգական, Կարսում և Բաթումում՝ 52 դպրոց, 3-ը՝ իգական²:

Հնչակյան տեսաբանները մեծ ուշադրություն են դարձրել ազգային մշակույթի, կրթության և դաստիարակության հիմնահարցերին: Սապահ-Գյուլյանի կարծիքով՝ հայ ժողովուրդը եվրոպական շատ ազգերի նման ունի բարձրարժեք մշակույթ, որը համեմատելի չէ չափազանց ցածր մակարդակի վրա գտնվող թուրքական, քրդական կամ չերքեզական մշակույթների հետ: Հայաստանում կան շատ երկրամասեր, – գրում է նա, որտեղ գրել-կարդալ չիմացողներին մատերի վրա կարելի է հաշվել, իսկ Վանի, Կարիճի, Սեբաստիայի և Կիլիկիայի շրջաններում հայ բնակչության՝ 100-ից 70–80-ը գրել-կարդալ գիտի³: Չնայած այդ ամենին՝ Սապահ-Գյուլյանի համոզմամբ թուրքն ուզում է. «...հայ մշակույթը, կուլտուրան արմատապես ոչնչացնել: Բայց դրա համար սեպհական կուլտուրական, մշակութական ոյժ, կարողութիւն չունի: Աշխարհակալութիւնը, տիրապետութիւնը նրան այդ նպատակին անկարող եղաւ հասցնել, մնում է միայն մի միջոց, – նախ Հայ Ազգը արմատապես բնաջնջել»⁴:

Հնչակյան տեսաբաններից Ա. Նազարբեկյանն իր հերթին դժգոհություն էր հայտնում հայ պատանիների դաստիարակության վերաբերյալ: Ըստ նրա՝ հայը պատանեկան տարիներից լսում է «խոհեմութեան խրատներ», որ իր երազանքներն ու հույսերն անհիմաստ են, որ դրանք անձնական, գործնական տեսակետից հեռու չափսի գնան և որ պետք է ունենալ մի այնպիսի գիտություն կամ արհեստ, որը կարող է ապահովել դրամական եկամուտներ և բարեկեցիկ կյանք. «Բուռն ու կենդանի ոգւոյ փոխարէն՝ մեզ մեռելութիւն էին քարոզում»⁵, – գրում է նա:

Ա. Արփիարյանն անմիջական կապ էր տեսնում լուսավորության տարածման և ազգային հիմնախնդիրների լուծման միջև. «...երբ տպագրուած առաջին գիրքը

¹ Տես նույն տեղում, էջ 8–9:

² Տես Երկանյան Վ., Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում (1870–1905), Երևան, 1970, էջ 122:

³ Տես Սապահ-Գյուլյան Ս., Ինքնավար Հայաստան, Գահիրէ, 1915, էջ 59–60:

⁴ Սապահ-Գյուլյան Ս., Հազարամեայ կռիւը, «Ինքնավար Հայաստան», 1916, N 13:

⁵ Նազարբեկյան Ա., Ի՞նչ ենք մենք եւ ինչ պէտք է լինենք, «Արմենիա», 1886, N 3:

Հայաստան մտաւ, վերջնական յաղթանակին առաջին անգամը հոն հնչած էր: Ու, Հայաստան բացուած ժողովրդական առաջին դպրոցը, ինքնապաշտպանութեան առաջին ամրոցը եղաւ»¹: Արփիարյանը, քննելով հայկական դպրոցներում կրթության ձևերի և բովանդակության խնդիրները, գտնում էր, որ կրոնական դաստիարակությունը չափից ավելի խորն է, ինչը կյանքում պարզապես կիրառելի չէ: Այդ առիթով նա գրում է. «Ու երբեմն երբ կը յիշեն այն բոլոր ընկերակիցներս որոնց հետ Օրթագեղի վարժարանին մէջ ենթարկուեցանք կրօնական այդ դաստիարակութեան, չեն տեսներ անոնցմէ գէթ փոքրամասնութիւն մը որ ինքնաբերաբար կատարէ այն պարտականութիւնները զոր դպրոցը սորվցուց. չեն հանդիպիր մարդերու որոնք իրենց սորված վարդապետութիւններէն մեծ օգուտ մը քաղած ըլլան իրենց կեանքին մէջ»²: Արփիարյանը կոչ էր անում երեխաներին տալ գործնականում կիրառելի գիտելիքներ ու հմտություններ. «... երբ դարձանքներ կ'ունենաք, արդեօք միայն բնագանգական, լեզուագիտական, քաղաքագիտական ուսումնե՞ր սովորեցնելու է, և քիչ մըն ալ սովորեցնելու չէ՞ այն բաները, որ գործնական են և կրնան ժողովրդին օգտակար ըլլալ նիւթական կեանքի կողմէ»³: Սակայն նա մտավորից բացի կարևորում էր նաև մարմնական կրթությունը, որին, ըստ նրա, անհրաժեշտ էր մեծ ուշադրություն դարձնել⁴:

Չնայած Արփիարյանը հայեցի կրթության ջատագով էր, կարևորը, սակայն, նրա համար որակյալ կրթությունն էր, թեկուզև օտար դպրոցներում. «Երբ միևնոյն թաղին մէջ երկու դպրոց կան մին մերինը, իսկ միւսը օտարինը, ու մերինն անկարգ ու անկանոն ըլլայ և օտարինը բարեկարգ վիճակի մէջ գտնուի, ի՞նչ պէտք է ընել: Անկարգ, անկանոն դպրոց մը անելի վնասակար չէ՞ քան այլադաւան, բայց բարեկարգ դպրոց մը»⁵: Արդյունավետ հայկական դպրոց և որակյալ կրթություն ունենալու համար Արփիարյանի համոզմամբ պէտք է ժողովուրդն ինքը պայքարի. «Հայ դպրոցին տէրը Հայ ժողովուրդն ինքն է: Տէր մը իր գործերը աղէկ տեսնելու համար պէտք է որ ինքն ալ «գործէն» աղէկ հասկնայ: Ինչու՞ համար մեր կրթական գործը շատ գէշ վիճակի մէջ է. մեղաւորը ո՛չ սա է, ո՛չ ան է. մեղաւորը՝ տէրն է: Կրթական խնդիրներով շահագրգռուող ո՛չ ժողովուրդ ունինք, ո՛չ ալ գոնէ մտաւորականներու խմբակ մը»⁶: Այսինքն՝ նա այդպիսով դնում էր ժողովրդի պատասխանատվության խնդիրը, որը ենթադրում է հասարակական գիտակցության որոշակի աստիճան, որն էլ պէտք է ի հայտ գար ժողովրդի որոշակի լուսավորվածության մակարդակում:

¹ Արփիարյան Ա., Առաջին ամրոց, «Լուսաբեր», 1908, N 469:

² Արփիարյան Ա., Անձնական յիշատակներ, «Հայրենիք», 1894, N 917:

³ Արփիարյան Ա., Առաջնորդներու պարտականութիւնը, «Հայրենիք», 1892, N 121:

⁴ Արփիարյան Ա., Չորրորդ կմախքներ, «Հայրենիք», 1892, N 252:

⁵ Արփիարյան Ա., Այլադաւան հայոց դպրոցներ, «Հայրենիք», 1891, N 40:

⁶ Արփիարյան Ա., Չորս պատէն մարդ չելլար, «Լուսաբեր», 1906, N 268:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է փաստել, որ հնչակյաններն ազգի փրկությունը սերտորեն կապում էին լուսավորված լինելու հետ, ուստի մեծ տեղ էին հատկացնում մատաղ սերնդի կրթությանն ու հայեցի դաստիարակությանը: Ընդ որում՝ չափազանց կարևորվում էր գործնական ու կիրառելի գիտելիքների դասավանդումը: Նրանք պահանջում էին կրոնական խորացված կրթության փոխարեն տալ աշխարհիկ կրթություն: Հարկ է նշել, սակայն, որ հայտնի պատճառներով հայկական դպրոցների մի զգալի մասը գործում էր եկեղեցու հովանու տակ, իսկ դասավանդողների մեծ մասը կրոնավորներ էին:

Կրթության ոլորտում եկեղեցու դերը ցայտուն կերպով արտահայտվում է 1903 թ. հունիսի 12-ի օրենքի հրապարակման ժամանակ, երբ ցարիզը փորձում է եկեղեցական գույքը բռնագրավելով՝ հարված հասցնել հայկական դպրոցներին և դրանով նոր թափ հաղորդել հայերի ռուսացման գործընթացին: Ռուսաստանի վարած այդ քաղաքականությունը նորություն չէր: Դեռևս 1890-ական թթ. կեսերին փակվել էին հայկական դպրոցները, որոնց գույքի, նյութական միջոցների հաշվին կովկասյան իշխանությունները ցանկանում էին բացել արքունի դպրոցներ, որտեղ ուսուցումը իրականացվելու էր ռուսերենով: Այդ քայլը, սակայն, հանդիպում է էջմիածնի դիմադրությանը, որը հրաժարվում է հանձնել փակված դպրոցների սեփականությունը հանդիսացող գույքը¹: Արդեն 1903 թ. հունիսի 12-ին Կովկասի կառավարչապետ իշխան Գոլիցինի անմիջական ջանքերով ցարը հաստատում է եկեղեցական գույքի բռնագրավման մասին օրենքը, ըստ որի՝ Հայոց եկեղեցու ամբողջ գույքն ու դրամազուլխն անցնում են պետական հիմնարկների տնօրինությանը: Դրա դիմաց պետությունը պարտավորվում էր որոշակի գումար հատկացնել եկեղեցուն՝ պահպանման ծախսերը հոգալու համար: Ըստ էության այդ օրենքի հրապարակմամբ ցարիզը փորձում էր Հայոց եկեղեցուն զրկել ֆինանսական ինքնուրույնությունից՝ դրանով նվազեցնելով նրա դերը հայ ազգային ու կրթամշակութային կյանքում: Այդ բռնագրավումները հարթ չէին ընթանում և ուղեկցվում էին ժողովրդական զանգվածների ու կառավարական զորքերի ընդհարումներով: Արյունալի բախումներ են տեղի ունենում Փանծակում, Բաքվում, Շուշիում և Կարսում: Այդ բախումները ուղեկցվում էին նաև ցարական պաշտոնյաների ահաբեկումներով: Այսպես, օրինակ, հնչակյանները մահափորձ են կատարում իշխան Գոլիցինի դեմ, այնուհետև ահաբեկում նաև Սուրմալուի գավառապետ Բոգոսլավսկուն, Բաքվի նահանգապետ Նակաշիձեին, էջմիածնի գավառապետ Շներլինգին և այլն: Այդ ամենը տալիս է իր արդյունքը. 1905 թ. օգոստոսի 1-ին ցարը

¹ Տես Երկանյան Վ., Հայ ազգային-ազատագրական պայքարի պատմությունից, «Բանբեր Երևանի համալսարանի», 1967, N 1, էջ 110:

հրամանագիր է ստորագրում Հայոց եկեղեցու գույքը վերադարձնելու և ազգային դպրոցները վերաբացելու մասին¹:

Եկեղեցական գույքի բռնագրավման իրողությանը անմիջապես անդրադառնում են հնչակյանները և դատապարտում ցարական իշխանությունների ոտնձգությունները: Այսպես՝ ըստ Նազարբեկյանի՝ ցարական կառավարությունը ռուսական ուղղափառ կրոնից տարբեր դավանանք ունեցող ռուսահպատակ բոլոր ազգերին (լեհեր, ֆիններ և հրեաներ) համարել է աղանդավորներ և այժմ էլ սկսել է հալածել Հայոց եկեղեցին: Նա առաջարկում էր խնդրի լուծման իր տարբերակ, ըստ որի. «Մենք պետք է կազմենք իբրև աշխարհիկ (laïque) մի հասարակություն և ո՛չ իբրև կրօնական մի հալաքականություն, և ազգային կրթությունն ու հարստությունները, որպես և ազգային հասարակական հիմնարկություններն ու գործառնությունները ենթարկենք աշխարհիկ հասարակութեան և ո՛չ թե եկեղեցիին»²:

Սապահ-Գյուլյանը ևս ճիշտ էր ըմբռնել այդ բռնագրավումների իրական նպատակը. «Ի հարկե խնդիրը ո՛չ մի քանի տասնեակ բանտարկեալների և ո՛չ էլ եկեղեցական-վանական կալուածների յափշտակութեան, գրաւման խնդիր է: Մենք ինքներս եկեղեցական կալուածների գրաւման կողմն ենք պետութեան կողմից. բայց այն պետութեան, որ կազմուած է ժողովրդի ձեռքով, գործում է ժողովրդով, ժողովրդի համար և ո՛չ թե այն կառավարութեան, որ առաջ է գալիս բռնակալութեան անունով և յափշտակութիւններ է անում բռնակալութեան սիւները ամրացնել ձգտող տարրերի համար»³: Տարիզմի քաղաքականության նպատակը Սապահ-Գյուլյանի համոզմամբ հայի ազգային ինքնուրույնության հիմքերը ոչնչացնելն ու ռուսացումն էր, ուստի կոչ էր անում պայքարել բռնագրավումների դեմ. «Դա պատմական էն մեծ պատասխանատու թոպէն է, եւ հայ ազգը իր իրաւունքից յետս չափտի ընկրկի: Նա տեղի կարող է տալ միայն անհաւասար կռիւի մէջ ընկնելով: Բայց քանի որ կանգուն է եւ ունի բազուկ՝ պիտի ընդդիմադրի, մինչեւ որ այդ բազուկը խորտակուի, փշուր փշուր լինի ... իսկ ռուսական բռնակալութիւնը այսօր շատ թոյլ է ժողովրդական այդպիսի բազուկ արմատապէս խորտակելու: Ընդդիմադրութիւն եւ ոչ թե հրաժարումն – ահա թե ինչ պիտի լինի հայի ուղեգիծը պատմական այս վայրկեանիս առաջ»⁴:

Այսպիսով, հնչակյան գաղափարախոսները չափազանց կարևորում էին գիտելիքի դերը՝ գտնելով, որ ազգի վերածնությունը հնարավոր է միայն բնութեով ազգային կրթության և հայեցի դաստիարակության միջոցով:

¹ Տես Երկանյան Վ., Հայ ազգային-ազատագրական պայքարի պատմությունից, էջ 111–119:

² Նազարբեկյան Ա., Կովկասում, «Վերածնություն», 1903, N 15:

³ Սապահ-Գյուլյան Ս., Կարմիր տողեր, «Հնչակ», 1906, N 5, էջ 42:

⁴ Սապահ-Գյուլյան Ս., Երկու պատասխանատուներ, «Երիտասարդ Հայաստան», 1903, N 22:

Арамазд Мкртчян, Значение национального образования и воспитания в политической концепции гнчакянов (в конце XIX и в начале XX веков) - В настоящей статье сделана попытка представить идеи гнчакянов, которые связаны с оценкой проблем открытия школ, образования и воспитания. Следует заметить, что в деле решения национальной проблемы (Освобождение Армении от гнета чужеземных захватчиков и создание национального государства) кроме оценки со стороны гнчакянов вопросов открытия школ, образования и воспитания, их взгляды были созвучны с прогрессивным духом времени и идеями свободомыслящих людей. Теоретики гнчакяны придавали большое значение роли образования и считали, что возрождение нации возможно только путем образования и правильного воспитания. Первостепенное значение придавалось образованию в национальном духе, а также светскому образованию, созвучному со временем и жизнью, хранению и усвоению культурного наследия прошлого.

Aramazd Mkrtchyan, The appreciation of the national education and upbringing in Hnchakian's political concept (late XIX century – early XX century)- In this article an attempt is being made to introduce Hnchakian ideas related to the evaluation of education, school building and upbringing issues as well as to provide access to the solutions they have proposed. It should be noted, that in the process of solution of nation's problems (liberation of Armenia from foreign yoke and the creation of a nation-state), apart from Hnchakian ideologists' evaluation of education, school building and upbringing, their views were in tune with the time's progressive spirit and the ideas expressed by liberal thinkers. Hnchakian theorists stressed the role of knowledge and thought that the nation's rebirth is possible only through education and proper upbringing. The priority was given to patriotic and secular education consonant with life and times as well as preservation and adoption of cultural heritage of the past.

Արամազդ Մկրտչյան - Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քաղաքագիտության ամբիոնի հայցորդ: